ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆԻ

(ՌՂԷ = 1648)

Յունիսի ամսոյ ԺԱ. յաւուր Կիւրակէի յետ մտանելոյ արեգականն ի մուտս՝ եղև յանկարծակի ճայթուն մեծ և ահագին, զի թնդիւն առեալ երկիր շարժեցաւ և դողալով սարսեալ երերաց քաղաքս ամենայն, և նաւք ի վերայ ծովուն առ իրեարս հարեալ մնային և ի սաստիկ բախմանէ յետս եկեալ խաղային. զի երեք անգամ մի ի վերայ միոյ շարժեաց և հազիւ դադարեցաւ սաստիկ պատիժ պատուհասին, հայեցեալ ամէնողորմ Ստեղծողն յողբ և ի ճիչ տղայոց անմեղաց և միանգամայն ամենայն սեռի։

Իսկ ահագին հրաշս այս գուշակումն եղև արտաբերելի իրիս այս. զի ի զրաւել աւուրց ԽԷ-ից, Յուլիս ամսոյ ԻԷ յաւուր Չշի(*) (27 Յ-ԼԷ) ի մէջ գիշերի դղրդեցաւ քաղաքս և բամբ մարդկան ի մի վայր գումարեցան՝ ուլամայք և սուլամայք, մեծամեծք և իշխանք, զօրք և զինաւորք խորհուրդ առին ի միասին սակս սպանման թագաւորին(**), առեալ ֆէթվայ ի մօլնայէն, որ ասեն մուհտի՝ Աբդռահիմ անուն։ Եւ ընդ լուսանալ առաւօտուն բարձրացաւ աղմուկ և խռովութիւն յոյժ։ Յայնժամ հրամայեցին փակել

(*) Շաբթուան օրերու համառօտագրութիւններն են. Բշի = Երկուշաբթի, Գշի = Երեքշաբթի, Դշի = Չորեքշաբթի, Եշի = Հինգշաբթի, Զշի = Ուրբաթ։

(**) Լուսանցքին վրայ օտար գրէ. Սուլթան Իպրահիմ։